



ՀՀ վիճակագրական կոմիտե (ԱՐՄՍՍՍՍ)

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ (2017 թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքները)

ԵՐԵՎԱՆ, 2018 թ. նոյեմբերի 30. ՀՀ վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՍՍՍ) «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցում ամփոփ ներկայացված է Հայաստանի աղքատության մակարդակի գնահատականը և սոցիալական վիճակի ու կենսամակարդակի փոփոխությունները 2008-2017թթ. ժամանակահատվածում: Սա տասնիններորդ հրապարակումն է ԱՐՄՍՍՍ-ի ամենամյա համանուն զեկույցների շարքում:

Զեկույցում ներկայացված են ԱՐՄՍՍՍ-ի կողմից իրականացված 2017 թվականի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքները: Զեկույցում օգտագործվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության և գիտության նախարարությունների տրամադրած տեղեկությունները, և այն կազմվել է Համաշխարհային բանկի վերլուծական և տեխնիկական աջակցությամբ:

Աղքատության մակարդակը գնահատելու համար զեկույցում որպես բարեկեցության ցուցանիշ օգտագործվել են սպառմանն ուղղված ծախսերը, որոնք ավելի ճշգրիտ տեղեկություն են տալիս բարեկեցության մասին, քանզի եկամուտների բացակայությունն ինքնին դեռևս չի նշանակում բարեկեցության զրոյական մակարդակ: Տնային տնտեսություններն իրենց ապրուստը հոգում են սեփական արտադրության սննդամթերքի սպառման կամ սպառումը մասնավոր վարկերից ֆինանսավորելու միջոցով: Ըստ այդմ, միջին եկամուտ ունեցող երկրներում, որոնց շարքին է դասվում Հայաստանը, աղքատները եկամուտ ստանում են նաև գործունեության բազմաթիվ կարճաժամկետ տեսակներից, որոնք չեն արտացոլվում եկամուտներին վերաբերող տվյալներում: Նման հանգամանքներում բարեկեցությունը գնահատվում է ոչ թե տնային տնտեսությունների գործունեության բոլոր տեսակներից ստացվող եկամուտների ճշգրիտ հաշվարկի, այլ սպառմանն ուղղված ծախսերի հիման վրա:

Զեկույցում ներկայացված է Հայաստանի աղքատության միտումը: Աղքատության մակարդակը գնահատվել է ՀԲ մեթոդաբանությամբ Աղքատության գնահատման ազգային սպառողական վարքագծի չափորոշիչների կիրառմամբ, որը վերջին անգամ թարմացվել է 2009թ. ՏՏԿԱՀ հիման վրա: Աղքատության գիծը կառուցվել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից հրապարակված՝ նվազագույն սննդային պահանջի կիրառմամբ (օրական 2.232 կալորիա մեկ շնչի հաշվով) և ներառում է ոչ պարենային բաղադրիչ, որն արտացոլում է Հայաստանի տնային տնտեսությունների սպառողական վարքագիծը: Աղքատության գիծը ամեն տարի վերանայվում է՝ գնաճի պատկերն արտացոլելու նպատակով:

**Աղքատության գծերը և դրանց վերանայումները 2008-2017 թթ. ժամանակահատվածում,
մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար**

(դրամ)

	Աղքատության գծերը		
	Աղքատության պարենային կամ ծայրահեղ գիծ	Աղքատության ստորին գիծ	Աղքատության վերին գիծ
2008	17 644	24 388	29 903
2009	17 483	25 217	30 920
2010	19 126	27 410	33 517
2011	21 306	29 856	36 158
2012	21 732	30 547	37 044
2013	22 993	32 318	39 193
2014	23 384	33 101	40 264
2015	24 109	34 234	41 698
2016	23 313	33 418	40 867
2017	24 269	34 253	41 612

Աղբյուրը՝ 2008-2017 թթ. ՏՏԿԱՀ

Այն տնային տնտեսությունները, որոնք հայտնել են մեկ չափահաս անձի հաշվով սպառման՝ աղքատության վերին գծից ցածր լինելու մասին, նկարագրվել են որպես **աղքատ, չափավոր (շատ) աղքատ** են այն տնային տնտեսությունները, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության ստորին գծից, և **ծայրահեղ աղքատ** են նրանք, որոնց սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է աղքատության պարենային գծից:

2017թ.-ին աղքատության վերին, ստորին և պարենային գիծը՝ ըստ սպառման, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով, մեկ ամսվա համար եղել է, համապատասխանաբար, 41 612 դրամ (կամ 86.2 ԱՄՆ դոլար), 34 253 դրամ (կամ 71.0 ԱՄՆ դոլար) և 24 269 դրամ (կամ 50.3 ԱՄՆ դոլար):

Հիմնական եզրահանգումներ. աղքատությունը և անհավասարությունը

- Զեկույցում նկարագրված է Հայաստանի տնտեսության վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը, որն ազդել է նաև տնտեսական ակտիվության, եկամուտների և սպառման վրա: 2008-2017թթ.-ին Հայաստանում աղքատության մակարդակի անկումը պայմանավորող առավել կարևոր գործոնը 2017թ.-ի տնտեսության աճն էր: Համաձայն «Ազգային հաշիվների համակարգ 2008 (ԱՀՀ 2008)» միջազգային ստանդարտի Հայաստանի տնտեսությունը 2013թ.-ին աճեց նախորդ տարվա նկատմամբ 3.3%-ով, 2014թ.-ին 2013թ.-ի նկատմամբ՝ 3.6%-ով, 2015թ.-ին 2014թ.-ի նկատմամբ՝ 3.2 %-ով, 2016թ.-ին 2015թ.-ի նկատմամբ՝ 0.2 %-ով, իսկ 2017թ.-ին՝ նախորդ տարվա նկատմամբ՝ 7.5 %-ով: 2017թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները ցույց են տալիս, որ ողջ բնակչության միջին ամսական իրական սպառումը 2008թ.-ի համեմատ աճել է 10.2%-ով և աճը նկատվել է սպառման բոլոր քվինտիլներում:
- 2017թ.-ին աղքատության մակարդակը կազմել է 25.7%՝ այսինքն՝ երկրի յուրաքանչյուր 10 բնակչից ամեն չորրորդը ամսական 41 612 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր են գտնվել: 2016թ.-ի համեմատ աղքատության մակարդակը նվազել է 3.7 տոկոսային կետով:
- 2017թ.-ին աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է 766 հազար մարդ (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), նրանցից չափավոր աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ 316 հազար, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ 42 հազար մարդ: Նախորդ տարվա համեմատ ինչպես աղքատների ընդհանուր թվաքանակը, այնպես էլ ծայրահեղ աղքատների թվաքանակը նվազել է, սակայն չափավոր աղքատների թվաքանակն աճել է ի հաշիվ այն ծայրահեղ աղքատների, որոնք անցել են չափավոր աղքատների դասին:

¹ Ըստ 2017թ. մշտական բնակչության միջին տարեկան թվաքանակի ցուցանիշի:

- **Աղքատության խորությունը** հաշվարկվում է աղքատ բնակչության հաշվով և ցույց է տալիս **աղքատության պակաստիրը**, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին եկամուտը¹ (Հայաստանի դեպքում՝ սպառումը) ցածր աղքատության գծից: 2017թ.-ին աղքատության խորությունն զիջել է 2008թ.-ի ցուցանիշին (4.4%-ը 2008թ.-ի՝ 5.1%-ի դիմաց): Աղքատության խորության գնահատականը նաև ցույց է տալիս, որ եթե երկիրը ֆինանսական հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և աղքատ, և ոչ աղքատ) մոբիլիզացնելու աղքատության գծի 4.4%-ին համարժեք ռեսուրսներ, և եթե այդ ռեսուրսները հատկացվեին միայն աղքատ տնային տնտեսություններին, ապա աղքատությունը տեսականորեն կվերանար, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին:

- **Աղքատության սրությունն** արտացոլում է աղքատ տնային տնտեսությունների անդամների միջև եղած սպառման անհավասարությունը: 2017թ.-ին աղքատության սրությունը գնահատվել է 1.2%: 2017թ.-ին աղքատության սրությունը զիջել է 2008թ.-ի ցուցանիշին (1.2%-ը՝ 1.4%-ի դիմաց): Աղքատության սրությունը արտացոլում է այն փաստը, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ:

Աղքատության հիմնական ցուցանիշները 2008, 2016 և 2017 թթ.

(տոկոսներով)

	2008թ.			2016թ.			2017թ.					
	Ծայրահեղ աղքատ	Չափավոր (շատ) աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Չափավոր (շատ) աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Չափավոր (շատ) աղքատ	Աղքատ	%-ը աղքատ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	1.9	13.0	27.6	2.0	9.6	28.8	1.2	9.8	25.0	59.7	4.1	1.1
£.Երևան	1.1	8.1	20.1	1.9	7.8	24.9	1.0	8.3	22.4	27.7	3.6	0.9
Այլ քաղաքներ	2.8	18.2	35.8	2.1	11.6	33.2	1.3	11.5	27.9	32.0	4.7	1.3
Գյուղական բնակավայրեր	1.2	11.9	27.5	1.4	10.1	30.4	1.9	11.8	26.8	40.3	4.8	1.4
Ընդամենը	1.6	12.6	27.6	1.8	9.8	29.4	1.4	10.6	25.7	100	4.4	1.2

Աղբյուրը՝ *SSYUL 2008, 2016 և 2017 թթ.*

Ծանոթություն: *Սպառումը գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով:*

- 2017 թ.-ին ծայրահեղ աղքատության մակարդակը կազմել է 1.4%՝ 2008թ.-ին արձանագրված 1.6%-ի դիմաց (0.2 տոկոսային կետով նվազում), իսկ աղքատության ընդհանուր մակարդակը կազմել է 25.7%՝ 2008թ.-ին արձանագրված 27.6%-ի դիմաց (1.9 տոկոսային կետով նվազում):

- 2017թ.-ին աղքատության մակարդակի տարբերությունը ըստ քաղաքային (25.0%) և գյուղական բնակավայրերի (26.8%) կազմել է 1.8 տոկոսային կետ: Մակայն, Երևանում (22.4%) և երկրի այլ քաղաքներում (27.9%) աղքատության մակարդակի տարբերությունը կազմել է 5.5 տոկոսային կետ:

- 2008-2017թթ.-ին աղքատության մակարդակի անկումը քաղաքային և գյուղական բնակավայրերում կազմել է համապատասխանաբար՝ 2.6 և 0.7 տոկոսային կետ: Մայրաքաղաք Երևանում ըստ տարածաշրջանների աղքատության մակարդակն ամենացածրն է (22.4%) և այն 1.2 անգամ ցածր է, քան Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում: 2008թ.-ի համեմատ 2017թ.-ին աղքատության աճը Երևանում կազմել է 2.3 տոկոսային կետ, իսկ Երևանից դուրս՝ այլ քաղաքային բնակավայրերում՝ աղքատության մակարդակը մնալով ամենաբարձրը, այնուամենայնիվ, 7.9 տոկոսային կետով զիջել է 2008թ.-ի մակարդակը: Երբ բնակչության կենսամակարդակը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը (59.7%) քաղաքաբնակներ են:

¹ Հայաստանի դեպքում՝ սպառումը:

- Ջինիի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում երկամուտների բաշխվածությունը տնային տնտեսությունների շրջանում անհավասար է (Ջինիի 0 գործակիցը նշանակում է լիակատարար հավասարություն Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների շրջանում, 1-ը նշանակում է առավելագույն անհավասարություն՝ ամենահարուստ տնային տնտեսությունների կողմից բոլոր ռեսուրսների տիրապետում): Սպառման անհավասարությունը, որը չափվում է Ջինիի գործակցով, ավելացել է՝ 2008թ.-ի 0.242-ից 2017թ.-ին կազմելով 0.289: Ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունն ավելացել է՝ 2008թ.-ի 0.339-ից կազմելով 2017թ.-ին 0.359:

- Ձեկույցը «Հարաբերական աղքատությունը» ենթաբաժին ունի (տե՛ս Բովանդակության 3.7 կետը), ինչպես նաև «Աղքատության մակարդակը տարածաշրջանի երկրներում»: Բացի սպառողական աղքատությունից, զեկույցում ներկայացված է նաև «Հայաստանի բազմաչափ աղքատության ազգային գնահատականը, որը պատրաստվել է Համաշխարհային բանկի կողմից:

Հիմնական եզրահանգումներ. աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ բնակչության սուբյեկտիվ գնահատականները

- 2017 թվականի ՏՏԿԱՀ-ի ընթացքում տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի անդամներին տրվել են հարցեր բարեկեցության և կենսամակարդակի վերաբերյալ: Վերլուծությունը թույլ է տալիս պարզել նրանց սուբյեկտիվ գնահատականները իրենց կենսապայմանների վերաբերյալ:

- Հայաստանում մեկ չափահասին համարժեք սպառման ագրեգատի հիման վրա հաշվարկված կենսամակարդակի օբյեկտիվ գնահատականի համեմատ՝ սուբյեկտիվ գնահատականներն ավելի ցածր են: 2017 թվականին հարցվածների 13.1%-ն իրեն համարել է աղքատ (ըստ սպառման ագրեգատի հաշվարկված 25.7%-ի համեմատ): Իրեն ծայրահեղ աղքատ է համարել 1.1%-ը, ինչը շատ մոտ է մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշով գնահատված ծայրահեղ աղքատության մակարդակին (1.4%): Ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի՝ 2017թ.-ին աղքատ (ներառյալ ծայրահեղ աղքատ) են իրենց համարել բնակչության 13.1%-ը (2008թ.-ի 17.0%-ի համեմատ):

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցը հասանելի է ԱՐՄՍՍՍՍ-ի կայքում՝ <https://www.armstat.am/am/?nid=82&id=2095>

Պարզաբանումների համար տեղեկատու՝

☎ 011523 356 Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժին